ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-955-26.02.2016-ՏՀ-010/2
Կ-961-11.03.2016-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի մայիսի 14-ի ՀՕ-118 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3.1-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետի «ավտոմեքենաներ» բառից հետո լրացնել «բացառությամբ՝ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ավտոմեքենաների» բառերը:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի 2-րդ պարբերությունից հանել «,կամ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվող ավտոմեքենաների մասով» բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

Առաջին ընթերցմամբ ընդունված «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (փաստաթղթային կոդ՝ Պ-955-26.02.2016-ՏՀ-010/0, Պ-955[1]-26.02.2016-ՏՀ-010, Կ-961-11.03.2016-ՏՀ-010 /0, Կ-961[1]-11.03.2016-ՏՀ-010 /0, Հեղինակներ՝ Վարդան Այվազյան, Գարեգին Նուշիկյան, Միքայել Մելքումյան, Հակոբ Հակոբյան, ՀՀ կառավարություն) վերաբերյալ առաջարկությունների

N	Առաջարկության դրությունը (փոփոխությունը, լրացումը) հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հիմնական հեղինակի (հեղինակների) եզրակացությունը	Փոփոխված (լրացված) հոդվածի տեսքը՝ ընդունված առաջարկությամբ

1.	Միքայել Մելքումյան, դոկտորանտ Արկադի Կոստանյան	Հոդված 3, «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ	Առաջարկվում է «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:» բառերը փոխարինել «պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:» բառերով:	Ընդունվել է:	***Հոդված 3.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

2.	Միքայել Մելքումյան, Վարդան Այվազյան	Հոդված 2, «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ	Առաջարկվում է «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:» բառերը փոխարինել «պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:» բառերով:	Ընդունվել է:	***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը: